



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

9 Ֆեբրվարի 2015 թ. N° 13 - Ա/1

ք. Երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N° 1 հավելվածի N° 1 աղյուսակի 08 բաժնի 04 խմբի 01 դասի «01. Երիտասարդական ծրագրեր» ծրագրի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն» ծրագիրը՝ համաձայն N° 1 հավելվածի:

2. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն» ծրագրի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N° 2 հավելվածի:

3. Օրենքի N° 1 հավելվածի N° 16 աղյուսակի ««Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի կազմակերպում» տողով նախատեսված միջոցներից սույն հրամանի 1-ին կետի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 1695500 (մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N° 2 հավելվածի:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ»

I. Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարվա մայրաքաղաքի հոչակման կանոնակարգի նախագծի մշակման մասին» N° 8 որոշման, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմկոմիտեի 2014 թվականի սեպտեմբերի 2-ի նիստի արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաք է հոչակվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքը:

II. Ծրագրի նպատակը

2. Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, երիտասարդական քաղաքականության ոլորտում քաղաքների միջև գործընկերային հարաբերությունների, ինչպես նաև մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցյունների զարգացմանը:

III. Ծրագրի բովանդակությունը

3. Ծրագիրը կիրականացվի 2015 թվականի փետրվարի 25-27-ը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում:

4. Ծրագրի մասնակիցները 50 երիտասարդներ են Ստեփանավան քաղաքից և հարակից համայնքներից, որոնք հիմնականում երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ են:

5. Ծրագրին մասնակցելու նպատակով Ստեփանավան կմեկնեն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցներ (6 մարդ), Մրցույթի փորձագիտական

հանձնաժողովի անդամները (6 մարդ) և 2014 թվականի երիտասարդական մայրաքաղաքի ներկայացուցիչը:

6. 2015 թվականի փետրվարի 25-ին բոլոր մասնակիցները կժամանեն Ստեփանավան քաղաք, և կմեկնարկի Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի պաշտոնական բացման արարողությունը:

7. Ողջույնի խոսքով հանդես կգան Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչը, Ստեփանավանի քաղաքապետ Մ. Ղարաքեշիշյանը, ինչպես նաև Սիսիան քաղաքի ներկայացուցիչը, որից հետո տեղի կունենա Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի վկայագրի պաշտոնական հանձնումը:

8. Կներկայացվեն «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի նպատակն ու խնդիրներները:

9. Այնուհետև ծրագրի մասնակիցները ներկա կգտնվեն Երիտասարդական պուրակի բացմանը, որը նախապես կընտրվի Նախարարության և Ստեփանավանի քաղաքապետարանի կողմից:

10. Սուրճի ընդմիջումից հետո մասնակիցներին կներկայացվի Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականությունը, հիմնարար փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը:

11. Տեղեկատվություն կտրամադրվի 2015 թվականին Նախարարության կողմից նախատեսված միջոցառումների և ծրագրերի մասին:

12. Կներկայացվեն Նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները:

13. Երեկոյան կկազմակերպվի ընդունելություն Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի անունից:

14. 2015 թվականի փետրվարի 26-ին մասնակիցներին կներկայացվի՝

1) Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգը (www.cragrer.am).

2) Երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցությունը, Հայաստանի Հանրապետությունում միջազգային երիտասարդական ծրագրերը.

3) Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի գործունեությունը և իրականացված հետազոտությունները:

15. Ծրագրի մասնակիցները ներկա կգտնվեն Երիտասարդական պուրակում Ստեփանավան քաղաքի երիտասարդական կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառմանը:

16. Ծրագրը կիրականացվի հետևյալ օրակարգով՝

Օր առաջին (փետրվարի 25)	
11.00-12.00	Մասնակիցների ժամանում և գրանցում
12.00-13.00	Ճաշ

13.00-14.00	Ծրագրի պաշտոնական բացում: Ողջույնի ելույթներ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյան, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ, Ստեփանավանի քաղաքապետ, Միսիանի ներկայացուցիչ: «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի նպատակի և խնդիրների ներկայացում: Մայրաքաղաքի վկայագրի պաշտոնական հանձնում:
14.00-15.00	Երիտասարդական պուրակի բացում
15.00-15.30	Սուրճի ընդմիջում
15.30-17.00	ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության ներկայացում: Հիմնարար փաստաթղթերը՝ հայեցակարգ և ռազմավարություն:
17.00-18.30	ՀՀ պետական երիտասարդական ծրագրերի ներկայացում: Նախարարության համակարգի «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատանքների նարկայացում:
19.00	Ընդունելություն ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի անունից
Օր երկրորդ (փետրվարի 26)	
08.00-09.00	Նախաճաշ
10.00-11.30	Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգը:
11.30-13.00	Երիտասարդության ոլորտում միջազգային համագործակցությունը: ՀՀ-ում միջազգային երիտասարդական ծրագրերը
13.00-14.00	Ճաշ
14.30-16.00	Փաստարկված երիտասարդական քաղաքականություն: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի և իրականացված հետազոտությունների ներկայացում:
16.00-18.00	Միջոցառում երիտասարդական պուրակում՝ Ստեփանավանի երիտասարդական կազմակերպությունների ներկայացմամբ:
19.00	Ընթրիք
Օր երրորդ (փետրվարի 27)	
08.00-09.00	Նախաճաշ
10.00	Մեկնում

IV. Ծրագրի արդյունքը

17. Ծրագրի իրականացման արդյունքում կզարգանա երիտասարդական նախաձեռնողականությունը, կձևավորվեն գործընկերային հարաբերություններ ինչպես տեղական և հանրապետական, այնպես էլ միջազգային մակարդակներում: Ծրագիրը խթան կդառնա Հայաստանի Հանրապետության քաղաքային իշխանություններին՝

տեղական մակարդակում երիտասարդական քաղաքականության իրականացման արդիական և արդյունավետ մոդելի մշակման համար:

V. Ծրագրի իրականացման տեխնիկական բնութագիրը

Աշխատանքի անվանումը	Նկարագրությունը
Ադմինիստրատիվ աշխատանք	«Հայաստանի Հանրապետության 2015 թվականի երիտասարդական մայրաքաղաքի բացման արարողություն» ծրագրի իրականացման շրջանակներում միկրոավտոբուսի վարձակալության, հյուրանոցային ծախսերի, սննդի հետ կապված ծախսերի, սուրճի ընդմիջման, արարողակարգային ճաշկերույթի, պաստառի, վկայագրի (շրջանակով) տպագրության, ինչպես նաև գրենական պիտույքների փաթեթների (թղթապանակ, գրիչ, նոթատետր)՝ համապատասխան պատկերանիշով տպագրությամբ, նվեր փաթեթների (կրծքանշան եռագույն ժապավենով, փուչիկ՝ ձողով) ձեռքբերման հետ կապված աշխատանքների իրականացում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝




Մ. ԱՆԱՆՅԱՆ

Հավելված N° 2
 ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի
 2015 թ. ֆեբրվարի 5 թ. N° 13 ՈՂ հրամանի

ՆԱԽԱԿԱՇԻԿ
 «ԱՎԱՅԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԿՎԱԿԱՆ ՄԱՅՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՑԱՆ ԱՄՈՒՐՈՒԹՅՈՒՆ»
 ԾՐԱԳԻ ԵՎԱՆՈՒՆ

N°	Հոդվածը (հավիճ նկարագրություն)	Չափանք միավորը (ՀՀ բյուջեից պահանջվող մասի)	Միավորի քանակը (ՀՀ բյուջեից պահանջվող մասի)	Մեկ միավորի արժեքը (ՀՀ դրամ, ՀՀ բյուջեից պահանջվող մասի)	Օրերի կամ գիշերների քանակը	ՀՀ բյուջեից պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Միավորի արժեքի հիմնավորումը
1	Տրանսպորտային ծախսեր						
1.1	Երևան-Ստեփանավան-Երևան միկրոավտոբուսի վարձակալություն (14 նստատեղ)	հաստ	1	100000	X	100000	Հարցում 1
2	Անգործության և աննյի ձեռքբերման ծախսեր					100000	
2.1	Հյուրանոցային ծախսեր	մարտ	14	15000	2	420000	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
2.2	Աննյի հետ կապված ծախսեր	մարտ	73	3000	1	219000	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
2.3	Առդրի ընդմիջման հետ կապված ծախսեր	մարտ	73	1500	1	109500	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
2.4	Արտորակագրային ծաշվերույթ	մարտ	100	3000	1	300000	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
3	Տվագրական ծառայություններ					1048500	
3.1	Հավատարմագրի տպագրություն	հաստ	1	2000	X	2000	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
3.2	Գրիմական պիտույքների փաթեթ (թղթապանակ, գրիչ, նոթատետր) համապատասխան պատկերամեջուկ տպագրությանը	հաստ	75	1400		105000	Հարցում 2
3.3	Պատաստի տպագրություն	քմ	40	4000	X	160000	ՀՀ սարքերի և երիտասարդության հարցերի նախարարի 2013 թվականի հուլիսի 30-ի N° 146-ՈՂ հրաման
4	Այլ ծառայություններ (նշել հստակ անվանումները)					267000	
4.1	Նվերի փաթեթ (կրճատման եռագույն ժապավենով, փոփոխ ձողով)	հաստ	400	700	X	280000	Հարցում 2
					X	1695500	

ԱՎԱՅԱՏԱՆԻ ՂԵՎԱԿԱՐ



Մ. ԱՄԱՆՅԱՆ